ՀՀ վարչապետի աշխատակազմի
ղեկավար Արայիկ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան, հունվարի18-ին ԱԺ կողմից ընդունվել է << Անկանխիկ գործառնությունների մասին>> ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտնելու ս.թ. հուլիսի 1-ից: Ընդհանուր առմամբ դրական գնահատելով պետության քաղաքականությունը՝ նվազեցնելու կանխիկ դրամաշրջանառությունը և տնտեսությունում ստվերային երևույթների դեմ պայքարը, ցանկանում ենք Ձեզ հայտնել մեր մտահոգությունները օրենքի որոշ դրույթների վերաբերյալ:

Օրենքի Հոդված 6-ի 4-րդ կետի համաձայն 2022 թվականի հուլիսի 1-ից Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ ՀՀ մարզերի վարչական կենտրոններում , 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում (հաստատություններում) մատուցված բոլոր բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

Մեր կարծիքով նման սահմանափակման կիրառումը դեռ շուտ է, դժվարացնելու է պացիենտների և ստոմատոլոգիական կլինիկաների փոխհարաբերությունները՝ բերելով որոշակի անհարմարությունների և լրացուցիչ երկկողմանի հավելյալ ծախսերի: Այս փոփոխությանը դեռ պատրաստ չեն թե՛ ազգաբնակչության, թե՛ ստոմատոլոգիական կլինիկաների և կաբինետների անձնակազմերի ճնշող մեծամասնությունը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ օրենսդիրի պատկերացմամբ մեր երկրում գոյություն ունեն բացառապես խոշոր բժշկական կենտրոններ՝ կայուն ֆինանսական, մարդկային և կազմակերպչական ռեսուրսներով: Ստոմատոլոգիական կլինիկաները և կաբինետները, ցավոք, այդ շարքին չեն դասվում: Բացի այդ ոլորտին բնորոշ է որոշ առանձնահատկություններ, որոնց հետ անհրաժեշտ է հաշվի նստել:

Ի դեպ, ստոմատոլոգիական ոլորտում օրենսդրական դաշտը լիարժեք չէ և կարիք ունի լուրջ կարգավորման: Օրենքի կիրառմանը խոչընդոտելու է նաև գործող լիցենզավորման կարգը:

Ստոմատոլոգիական ծառայությունների ցանկում մեծ տեղ են զբաղեցնում փոքրարժեք բժշկական գործողություններ՝ օրինակ ատամի ռենտգեն պատկերում, կարիեսի բուժում, ատամնաշապիկի ամրացում, անզգայացում և այլն: Ներկա պահին բուժառուն ծառայության դիմաց վճարում է կանխիկ դրամով կամ բանկային քարտով, եթե կլինիկայում կամ կաբինետում առկա է նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենա; Քարտային ծառայություններից մեծամասամբ օգտվում են զբաղվածություն ունեցող քաղաքացիները, թոշակառուները եզակի բացառությամբ, իսկ երեխաները (սովորաբար 15-18 տարեկան երեխաները մեծամասամբ հաճախում են միայնակ) և չաշխատող բնակչությունը չունեն այդ հնարավորությունը: Օրենքի դրույթները կիրառելու դեպքում խնդիր է դառնում վճարման գանձումը, քանի որ դա պետք է կատարվի կամ բանկային համակարգով կամ վճարային տերմինալներով: Ստոմատոլոգիական ծառայությունները շատ ժամանակ տրամադրվում են օրվա տարբեր ժամերի, անհետաձգելի դեպքերում գիշերային և հանգստյան օրերին: Նշված դեպքերում առաջ կգան ոչ ցանկալի երևույթներ, որոնք հավանաբար կնպաստեն օրենքի կատարման անհնարինությանը: Որպես հարցի լուծում տնտեսավարողները ստիպված են լինելու տեղադրել վճարային տերմինալներ, ունենալ լրացուցիչ հաստիքներ սպասարկման համար: Այդ ամենը կբերի հավելյալ ֆինանսական ծախսերի թե կլինիկաների և կաբինետների, թե պացիենտների համար:

Ի դեպ մեր երկրում ստոմատոոգիական կլինիկաները և կաբինետները մեծամասնությամբ փոքր են, կահավորված մեկ կամ երկու համասարքերով և սպասարկվում են փոքրաթիվ անձնակազմով:

Մեր կարծիքով օրենքի նշված դրույթի կիրառումը տանելու է ոլորտում ստվերային երևույթների դրսևորումներին: Տնտեսավարողների և բուժառուների մի մասը խուսափելու է դժվարություններից և ստեղծված անհարմարություններից: Արդյունքում պացիենտները դիմելու է այն մասնագետներին, որոնք ցավոք մինչ այսօր գործում են ստվերում՝ խուսափելով օրինական գործունեությունից: Իսկ որոշ տնտեսավարողների մոտ կմեծանա ստվերային շրջանառության հավանականությունը :

Ուստի հաշվի առնելով վերը նշված համգամանքները և այն, որ օրենքն ուժի մեջ է մտնելու հուլիսի 1-ից, առաջարկում ենք վերանայել << Անկանխիկ գործառնությունների մասին>> ՀՀ օրենքի հոդված 6-ի 4-րդ կետի դրույթները և ստոմատոլոգիական ծառայություններն իրականացնել նույն օրենքի հոդված 4-ի 1-ին կետով, ըստ որի մինչև 300000 դրամ գործարքները կարող ենք իրականացնել կանխիկ ձևով:

<<Հայ Ստոմատոլոգների Միություն>> ՀԿ նախագահ՝ Գ.Քալանթարյան

<<Հայաստանի Օրթոդոնտների Ասոցիացիա>>ՀԿ նախագահ՝ Հ.Տեր-Պողոսյան

<<Հայաստանի Պերիոդոնտոլոգների Ասոցիացիա>>ՀԿ նախագահ՝ Վ.Բակալյան

<<Ստոմատոլոգիական տուրիզմ դեպի Հայաստան >> տնօրեն՝ Ն.Հովհաննիսյան

30.04.2022թ.

ՀՀ Առողջապահության նախարար
տիկին Ա. Ավանեսյանին

Հարգելի նախարար, 2022թ. հունվարի18-ին ԱԺ կողմից ընդունվել է << Անկանխիկ գործառնությունների մասին>> ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտնելու ս.թ. հուլիսի 1-ից: Ընդանուր առմամբ դրական գնահատելով պետության քաղաքականությունը՝ նվազեցնելու կանխիկ դրամաշրջանառությունը և տնտեսությունում ստվերային երևույթների դեմ պայքարը, ցանկանում ենք հայտնել Ձեզ մեր մտահոգությունները օրենքի որոշ դրույթների վերաբերյալ:

Օրենքի Հոդված 6-ի 4-րդ կետի համաձայն 2022 թվականի հուլիսի 1-ից Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ ՀՀ մարզերի վարչական կենտրոններում , 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում (հաստատություններում) մատուցված բոլոր բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

Մեր կարծիքով նման սահմանափակման կիրառումը դեռ շուտ է, դժվարացնելու է պացիենտների և ստոմատոլոգիական կլինիկաների փոխհարաբերությունները՝ բերելով որոշակի անհարմարությունների և լրացուցիչ երկկողմանի հավելյալ ծախսերի: Այս փոփոխությանը դեռ պատրաստ չեն թե՛ ազգաբնակչության, թե՛ ստոմատոլոգիական կլինիկաների և կաբինետների անձնակազմերի ճնշող մեծամասնությունը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ օրենսդիրի պատկերացմամբ մեր երկրում գոյություն ունեն բացառապես խոշոր բժշկական կենտրոններ՝ կայուն ֆինանսական, մարդկային և կազմակերպչական ռեսուրսներով: Ստոմատոլոգիական կլինիկաները և կաբինետները, ցավոք, այդ շարքին չեն դասվում: Բացի այդ ոլորտին բնորոշ է որոշ առանձնահատկություններ, որոնց հետ անհրաժեշտ է հաշվի նստել:

Ի դեպ, ստոմատոլոգիական ոլորտում օրենսդրական դաշտը լիարժեք չէ և կարիք ունի լուրջ կարգավորման: Օրենքի կիրառմանը խոչընդոտելու է նաև գործող լիցենզավորման կարգը:

Ստոմատոլոգիական ծառայությունների ցանկում մեծ տեղ են զբաղեցնում փոքրարժեք բժշկական գործողություններ՝ օրինակ ատամի ռենտգեն պատկերում, կարիեսի բուժում, ատամնաշապիկի ամրացում, անզգայացում և այլն: Ներկա պահին բուժառուն ծառայության դիմաց վճարում է կանխիկ դրամով կամ բանկային քարտով, եթե կլինիկայում կամ կաբինետում առկա է նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենա: Քարտային ծառայություններից մեծամասամբ օգտվում են զբաղվածություն ունեցող քաղաքացիները, թոշակառուները եզակի բացառությամբ, իսկ երեխաները (սովորաբար 15-18 տարեկան երեխաները մեծամասամբ հաճախում են միայնակ) և չաշխատող բնակչությունը չունեն այդ հնարավորությունը: Օրենքի դրույթները կիրառելու դեպքում խնդիր է դառնում վճարման գանձումը, քանի որ դա պետք է կատարվի կամ բանկային համակարգով կամ վճարային տերմինալներով: Ստոմատոլոգիական ծառայությունները շատ ժամանակ տրամադրվում են օրվա տարբեր ժամերի, անհետաձգելի դեպքերում գիշերային և հանգստյան օրերին: Նշված դեպքերում առաջ կգան ոչ ցանկալի երևույթներ, որոնք հավանաբար կնպաստեն օրենքի կատարման անհնարինությանը: Որպես հարցի լուծում տնտեսավարողները ստիպված են լինելու տեղադրել վճարային տերմինալներ, ունենալ լրացուցիչ հաստիքներ սպասարկման համար: Այդ ամենը կբերի հավելյալ ֆինանսական ծախսերի թե կլինիկաների և կաբինետների, թե պացիենտների համար:

Ի դեպ, մեր երկրում ստոմատոոգիական կլինիկաները և կաբինետները մեծամասնությամբ փոքր են, կահավորված մեկ կամ երկու համասարքերով և սպասարկվում են փոքրաթիվ անձնակազմով: